

Շ Ո Ւ Մ Ե Ն Ի Հ Ա Յ Ե Ր Ը

(ԳԱՂՈՒԹԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ 350—ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Շումենը, որ այժմ Կոլարովգրադ կկոչվի, Հյուսիսային Բուլղարիո հնագույն բնակավայրերեն մին է, կառուցված Դանուբը անցնող նախաբուլղարներու կողմե, իր բնական դիրքին ամրության և նախապես անտառներով շրջապատված ըլլալուն համար:

1388-ին, երբ Սուլթան Մուրադի հրամանատար Ալի փաշան գրավեց Շումենը, հիշատակութեան արժանի քաղաք մը չէր ան, այլ բուլղարական բերդ մը: Այդ գրավումեն բավական տարիներ հետո է, որ այս բնակավայրը ստացած է քաղաքի ձև և անուն:

2. Դուկաս Ինճիճյան իր «Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի» աշխատութեան մեջ կգրե. «Գոյով սա գիւղաքաղաք յամենայն շինութիւնս ծաղկեալ և բարգաւաճ՝ կոչի ի բազմաց Փոքր Էտրէնէ»¹:

Համաձայն թուրք պատմիչ Էվլիա Չելեբիի, 1550—1600 թվականներուն Շումենը արդեն սկսած էր որպէս բարգաւաճ քաղաք գրավել օտար վաճառականներու ուշադրութիւնը: 1600-ական թվականներուն է, հավանաբար, որ հայ գաղթականներ եկած և հաստատուած են նաև այս քաղաքը, ըստ բուլղար պատմիչ պրոֆ. Իշիրկովի²:

Ըստ մեր պրպտումներուն, առաջին անգամ Շումեն եկող հայերը 10—12 ընտանիքն ալիւի շին եղած:

Թեև Շումենի հայ գաղութի սկզբնավորութեան բուն թվականի մասին որեւէ գրավոր հիշատակարան չէ գտնված ցարդ տեղւոյն վրա, սակայն կաթողիկ եպիսկոպոս Պետր

Բոգդան երբ 1640-ին կըրջի Բուլղարիան, Շումենի մեջ կգտնե 19 տուն հայեր, շուրջ 40 հոգի, որոնք դեռ եկեղեցի չունին և կաղութին տան մը սենյակին մեջ³:

Շումենի հայերու մասին եղած առաջին այս գրավոր վկայութենն ևս կրնանք հետեցնել, թե Շումենի հայ գաղութին սկզբնավորութիւնը եղած պետք է ըլլա Ռուջուկի, Թոնովի, Ռազդրադի և շրջակա հայ գաղութներու կազմութեան տարիներուն, այսինքն ամենականուիւր 1606, իսկ ամենաուշը 1610 թվականներուն, երբ Կաֆայի (Ղրիմի) շրջանին մեջ տիրող մեծ սովն ու համաճարակը պատճառ կըլլան, որ տեղւոյն հայ գաղթականներն մաս մը, որոնք նախապես եկած էին Երևանի և Նախիջևանի շրջաններն, դան և հաստատուին Շումեն: Թրքական հին փաստաթուղթ մը Թոնովի և շրջակայքի հայերը կկոչե «թայիֆի աճեմ» («պարսկահայ խմբավորումներ»), որովհետև այդ թվականներուն (1600) Երևան և Նախիջևան կգտնվեին պարսիկներու տիրապետութեան տակ և հայ բնակչութենն մաս մը 1604-ին, Շահ Աբբասի բռնութենն փախչելով, գացել է դեպի Սև ծովու եզերքները, մինչև Ղրիմ:

Ժէ դարու անգլիացի ճանապարհորդի մը վկայութեամբ ալ, Դանուբի շրջանի հայերը եկած են Ղրիմեն:

Ահա Ղրիմի այս գաղթականներն մաս մը եկած և հաստատուած է Հյուսիսային Բուլղարիո զանազան քաղաքներուն մեջ, մինչև Բելգրադ: Այս մասին կվկայե նաև Գրիգոր Դարանաղեցի մեծ ժամանակագիրը գրելով. «Եւ լինել սովին ոմանք Ստամբուլ եկին և ո-

1 Հ. Դուկաս Ինճիճյան, «Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի», 2, Վենետիկ, 1804, էջ 134:

2. Տե՛ս «Բուլղարական համալսարանի տարեգիրք», հատ. III, 1906—1907. (բուլղարերէն):

3 է. Ֆեմենցիու, «Բուլղար եկեղեցւո տարեգրութիւն», Զագրեբ, 1887, էջ 76, 263 (բուլղարերէն):

մանք ալ ի Թրակիա, որ Ուոռմէլ ասի, ի Վառնայու անցանելով մինչև Պելկրատ»⁴:

Բալական տարիներ հետո, 1750-ական թվականներուն, Շումեն կհասնի հայ գաղթականներու ներկորդ խումբ մը 14 ներտասարդներ բաղկացած, բոլորն ալ նախնականներ, հավանաբար նախապես եկածներու հետովոր ազգականներ, որոնցմէ մեկը կամուսնանա տեղացի աղջկան մը հետ և կձեռնադրվի առաջին հայ քահանա տեղվույն Ս. Աստվածածին եկեղեցվո վրա և կկոչվի Տեր Դանիել: Այս 14 ներտասարդներն 5-ը կթրքանան և կկոչվին «Թախմազ պուլկունլարը», այսինքն պարսից Թահմազ դուլի խանին 1755 թվականին հայոց վրա ի գործ դրած խժոժություններն փախչողներ:

Համաձայն հին վկայութիւններու, Ժէ դարու սկիզբները Շումեն եկող առաջին հայերը ապրած են քաղաքին դուրս, Զիֆթլիկ պալըր կոչված բարձունքի (այժմ Բոշլիկը) հարավ արևելյան փեշերուն տակ, որուն մոտերը եղած է հայոց առաջին գերեզմանոցը:

1800-ական թվականներուն հայերը կամփոփվին այժմյան հայ եկեղեցիին շուրջը, որ ներկայիս կկոչվի Արմենսկա շաստ (Հայկական թաղ):

Այս եկեղեցիին բակը սալարկված է հին գերեզմանոցին բերված մարմարյա տապանաքարերով, որոնցմէ ամենահինն է 1785 թվականը կրող «Մանտեսի Մեխանսար որդի մանտեսի Յունան»-ի տապանաքարը:

Կան նաև հետևյալ հայերն տապանադրութիւնները.

«Տապանս այս է հանգստեան Քուզուսեց հանի Ակոբին որդի հանի Զաֆառ կամ Մարթայի որդի Կարապետն, որ փոխեցաւ ի կեանս քովն Հայոց ՌՄՄ» (1801):

«Այս է տապան հանգստեան մեսսի Փիլիպոսի կողակից մեսի Մարգարիտն, որ հանգեաւ ի սէնէի տակաց 1236 (1821):

«Այս է տապան հանգստեան Կուսկուզաւ հանի Զաֆառն կողակից հանի Մարիամին, որ փոխեցաւ ի կեանս քովն ՌՄՆ» (1821):

Հետաքրքրական է, որ մինչև 1821 թվականին շինված տապանաքարերը գրված են հայերեն լեզվով, իսկ 1830-են սկսյալ մինչև 1878, Բուլղարիո թրքական լուծեն ազատագրումը, գրեթէ բոլոր տապանադրութիւնները հայատառ թրքերեն են, վերամբարձ ոճով և չափածո: Աստուծոյն ընթերցելի են հետևյալները. Հանի Զաֆառ (կարծեմ Տեր Դանիելի որդի), 1831-ին մեռած, Մեքադ Համբարձումյան՝ 1832-ին, Մուրատ Հանի Ակոբյան՝ 1832-ին, Հանի Սարգիս Նազարյան՝ 18...-ին,



ՀԱՆԻ ԶԱՔԱՐԻ ՈՐԴԻ ՔՈՍԿՈՍԵՑ ՀԱՆԻ ԱԿՈՐԻ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ (1801)

Հանի Թագունի Ղազարոսյան՝ 1839-ին, Հանուր Տուտու Կիրակոսյան՝ 1849-ին, Հանի Սիմա Գևորգյան՝ 1855-ին, Խարուն Հանի Աբրահամյան՝ 1858-ին, Հովհաննես Մուրատ Հակոբյան՝ 1878-ին: Դեռ տասնյակ մը անընթեռնելի տապանաքարեր ևս կան, որոնք ո՞վ գիտն իրենց ընդերքին մեջ ինչ կարևոր դեպքեր ունին պատմելիք...:

Ահա հայատառ թրքերեն գրված տապանադրութիւններն նմուշ մը.

«Կէլ իպրէթ ալ, է՛լ տօստ, սէն ֆի պաղրման,
Ախր էքմէ էնէլի ասլա խաքընտան:
Պու ճիհանտա վարընա ֆիպիր էքմէ, է՛յ հան,
Նամ կէշէր, շան կիտէր, քաշ գալըր ճիշան:
Իսմիմ տիր Հանուր Տուտու Կիրակոսեան,
Սինէիմ օթուզ ալըր իաի արաւամ տէրման,

⁴ Գրիգոր Դարանդեցի, «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1915, էջ 96:

Պէն պիր պէֆիար քրդ իսիմ, Շումլու տար
վէթան:

Եկէր զհարէք էտէրիսէն, է՛յ ճիվան,
Խայրըլը տուալէրին իլէ պէնի ան:
Հետաքրքրութեան համար կուտանք թարգ-
մանութիւնը:

Ո՛վ բարեկամ, ե՛կ, օրինակ առ, դու որ
ողջ ես,

Մահը ամենեւին մտքեդ չհեռացնես:
Այս աշխարհի մեջ ունեցածովդ մի՛

Համբավ և անուն բոլորը կանցնին, իբր
նշան կմնա մեկ քար:

Իմ անունն էր Տուտու Կիրակոսյան,
Երեսուկեց տարեկանիս հիվանդացա,

Յավը ակնթարթ միսկ շտվավ ժամանակ
ինձի,

Ես, որ ամուրի աղջիկ մէի բնիկ շումանցի:
Ո՛վ երիտասարդ, եթե այցելես

Բարի աղոթքովդ հիշատակե՛ զիս:

Այս տապանաքարերուն վրա փորագրված
գործիքները ցույց կուտան, թե տեղացի հա-
յերը ինչ արհեստներ ունեցած են՝ դերձա-
կութիւն, պղնձագործութիւն, ոսկերչու-
թիւն, ժամագործութիւն, կոշակարութիւն:

2. Ղ. Ինճիճյան, «Եփհաննումա»-յի տված
տեղեկութիւններուն վրա հենլով, կրսե, թե
Շումանի պղնձագործները Տրապիզոն—Վառ-
նա ծովախիւ ճամբով ձուլ պղինձ բերել կու-
տային և աշխատել հետո կուղարկէին
Կոստանդնուպոլիս ծախելու, «Ուստի լի են ի
Շումանի կրպակը պղնձագործաց»⁵:

Ըստ տեղացիներու վկայութեան, հայ ար-
հեստավորները եղած են հմուտ վարպետ-
ներ, իսկ վաճառականները՝ պատվավոր
առևտրականներ: Հայերեն ոմանք եղած են
Ֆինանսի պաշտոնյա (սանդըկ էմինի Աղամ
էֆենդի), հայ փոքրամասնութեան ներկա-
յացուցիչ (միլլեթ մյուզիքի Օհան էֆենդի),
հաշվապաններ, վերակացուներ և այլ պե-
տական կարևոր պաշտոնակատարներ:

1896-ին և 1922-ին եկող հայերն ալ իրենց
հետ բերած են նոր արհեստներ ևս՝ գորգա-
գործութիւն, պինտալը, տիվալճիութիւն
(այսինքն արծաթաթիւ բանվածքով ասեղ-
նագործութիւն և հարսանեկան նրբաճաշակ
հագուստներ) և այլն:

Հայ հարուստներու տունները եղած են
երկհարկանի, նույնիսկ եռահարկ, դահլիճ-
ներով և մեծ սենյակներով: Տուններու գեղե-
ցիկ պարտեզները ունեցած են ցայտաղ-
բյուրներ ալ: Առաստաղներու գեղաբանական
բանվածքները հաճախ ուշադրութեան արժա-

5 2. Ղուկաս Ինճիճյան, հիշված աշխատութիւնը,
էջ 135:

նացած են օտարերկրացի հյուրերու և իշ-
խաններու կողմէ:

Մահտեսի Ակոբ աղա Գրիգորյանը 1782-ին
կառուցել տված է քաղաքին Չենկել կոչված
ծայրամասին մեջ ցարդ գոյութիւն ունեցող
աղբյուրը հայերեն և թրքերեն զույգ ար-
ձանագրութիւններով:

«Յիշատակ է այս մահտեսի Գրիգորի որդի
մահտեսի Ակոբին, 1782»:

«Սաճիք իւ խայրաք վէ իւ հասէնար
Հանի Գրիգոր օղլու Հանի Ակոբ: Սէնէ 1198
տանկաց»:

93 տարի հետո այս աղբյուրը նորոգված
է հետևյալ արձանագրութեամբ:

«Մահտեսի Ակոբի որդի Մուրատ աղայի
որդին մահտեսի Մկրտիչ աղան նորոգեց
աղբիւրս այս յիշատակի»:

Անուններն հայտնի է, որ այս նորոգու-
թիւնը կատարողը բուն բարեգործին թոռն է:

Հետաքրքրական է, որ տեղացիներն շա-
տերը մահտեսի եղած են, ուրեմն գացած են
Ս. Երուսաղեմ: Աստուծան զատ, տեղւոյն
վրա հաստատեցինք, որ շատեր ալ ձիերով
մինչև Մշո Ս. Կարապետ վանքը և Ս. էջ-
միածնի մայրավանքը ուխտի գացած են:

Շումանի մեջ հայ եկեղեցւո գոյութեան մա-
սին հիշատակութիւններ կան բավական կա-
նուխեն: 2. Ղուկաս Ինճիճյան իր վերոհիշյալ
աշխատութեան մեջ կրսե. «Շումալուի մէջ կան և
յազգէս Հայոց, որք ունին եկեղեցի»: Իսկ 2.
Ղ. Ալիշան 1853-ին հրատարակած իր քա-
ղաքական աշխարհագրութեան 399-րդ էջին
մեջ կրսե, թե Շումալուի հայերը 150 տուն են,
մեկ եկեղեցի և մեկ դպրոցով»:

Թեև շկարողացանք առաջին եկեղեցւո
սովթանական հրամանագիրը (Ֆերման կամ
իրադի) ձեռքի տակ ունենալ, որպեսզի
կարենայինք ճշտել, թե ինչ պայմաններու
տակ և ինչ դժվարութիւններով հայերը կա-
րողացած են եկեղեցի կառուցանել, բայց
հենլով Պետր Բոգատանի կանխագույն հիշա-
տակութեան վրա, հայերը գրեթե առաջին իսկ
տարիներուն (1640-ական թվականներուն)
տան մը սենյակին մեջ կաղոթեին:

Շումանի առաջին փայտաշեն եկեղեցին
1828—1829-ի ուս-թրքական պատերազմի
օրերուն այրած ըլլալով, հայերը 3—4 տարի
հետո, 1834-ին, վերստին շինած են իրենց
Ս. Աստվածածին եկեղեցին, այս անգամ քա-
ղաշեն և ավելի մեծ:

Այս նորակերտ եկեղեցիին մուտքի դռան
վերև գրված է. «Ես եմ դռան, ընդ իս թէ որ
մտանիցէ, կեցցե, մտցէ և ելցէ և նառակ
գտցէ: 1843 հոկտ. 23»:

Հալած օղլու բարերարը Ռուսաստանն
բերել կուտա նոր եկեղեցւո զանազակը, իսկ
Յաղուպյան մահտեսի Հովհաննես աղան

Կոստանդնուպոլսեն բերել կուտա Հայսմա-
վուրք մը:

Շուրջ 100 տարի հետո, 1928 թվականի
երկրաշարժին վնասված և վտանգված են այս
եկեղեցիվ ալագ խորանը և ձախակողմյան
ավանդատունը: Բայց հաջով մեկ տարի անց,
եկեղեցին կրկին վերանաորգված է եզրի-
տարնակ բնիկ շումենցի Մուրատ Մյոհդե-
մետյանի նվիրատվությամբ: Նվիրատուի ա-
նունը արձանագրված է ավանդատան պա-
տին արտաքին կողմը:

Շումենի Ս. Ատվածածին եկեղեցիվ մեջ
պաշտոնավարած քահանաներն են. 1756-են
սկսյալ՝ Ս. Դանիել նախիջևնցի, 1870-ին՝
Ս. Հակոբ Հովհաննեսյան, 1880-ին՝ Ս. Ա-
րիստակես Հովհաննեսյան, 1890-ին՝ Ս. Աբ-
րահամ Գրիգորյան, 1905-ին՝ Ս. Խաչատուր
Հարությունյան, 1906-ին՝ Ս. Խորեն Քյուչիկ-
յան (պոլսեցի), 1908-ին՝ Ս. Հովհան Հով-
հաննեսյան (մշեցի), 1913-ին՝ Ս. Օհան Ման-
դակունի, 1928-ին՝ Ս. Աթանաս Ալվազյան
(ենիջեցի), 1938-ին՝ Ս. Հուսիկ Աստարճյան
(վառնացի), 1941-ին՝ Ս. Միքայել Պե-
ղրեմյան (կելիպոլուցի), 1945-ին՝ Ս. Աթա-
նաս Ալվազյան (երկրորդ անգամ), 1953-
ին՝ Ս. Գարեգին Տյուկերյան (ռուսչուցի):

Շումեն այցելած և սույն եկեղեցիին մեջ
պատարագած են հետևյալ բարձրաստիճան
հոգևորականները. Խորեն արքեպիսկոպոս
Նարայե 1885—1886-ին (Բեռլինի վեհաժողովին
հետո), Ղևոնդ եպիսկոպոս Դուրյան, Ստեփանոս
արքեպիսկոպոս Հովակիմյան 1928 թվականին,
Երվանդ արքեպիսկոպոս Փերտահճյան 1934-ին,
եկեղեցիվ 100-ամ-
յակին առթիվ, Գրիգորիս ծայրագույն վար-
դապետ Կարապետյան 1945-ին, Վազգեն
եպիսկոպոս Պալճյան (այժմ Կաթողիկոս
Ամենայն Հայոց) 1954—1955-ին, Կոմիտաս
եպիսկոպոս Տեր-Ստեփանյան 1959-ին, իսկ
այժմ՝ առաջնորդ Տիրայր վարդապետ Մար-
տիկյան:

Եկեղեցիվ մեջ կա Ս. Հակոբ Դլխադիրի
պատկերը, որ նվիրված է Մաթոս-օղունե-
րու գերդաստանեն 1868 մարտ 31-ին:

Ներկայիս եկեղեցական վարչության ատե-
նապետն է պր. Հ. Մուրատյան, իսկ անդամ-
ներն են Օ. Զիրինկիրյան, Գ. Եղիայան, Գ.
Մարտիրոսյան և Մ. Կարապետյան, որոնք
կաշխատեն այս գաղութի Հայաստանյայց
Ուղղափառ եկեղեցիին պայծառ և լուսավորչի
լուսատու կանթեղը վառ պահել:

Շումենի հայերը հին են ի վեր եղած են
խորապես հավատացյալ և մայրենի լեզվի
ու Հայ եկեղեցիվ պայծառացման նախան-
ձախնդիր ավանդապահներ:

Տեղվույն քաղաքային թանգարանի ավագ
աշխատակից Կ. Ճումալիև, հենվել պատմիչ

ալրոք. Իրեչեկի վկայություններուն վրա, կը-
սի, թե հայերը, հակառակ թրքախոս ըլլալ-
ուն, իրենց եկեղեցիին մեջ աղոթած են
միշտ իրենց մայրենի լեզվով և եկեղեցիվ
կից ունեցած են իրենց սիրական դպրոցը:

Շումենցիներու առաջին դպրոցը փաստա-
ցիորեն մեզ ծանոթ է 1834-ին, արձանա-
գրված Կոստանդնուպոլսո Ազգային Պատ-
րիարքարանի կողմն կատարված կրթական
վիճակագրության դպրոցներու ցանկին մեջ⁶:

Շումենցիներեն ոմանք կհիշեն, թե դեռ
1834-ին Կոստանդնուպոլսո Պատրիարքա-
րանին ստացված քաղաքական նամակ մըն
ալ կա եղեր հայոց առաջին դպրոցի մասին,
սակայն վերջերս կորսվել է ղեկավարաբար:

1834-ին բացված այդ դպրոցը, մայրենի
լեզվի այդ օջախը, ի գին ամեն զոհողու-
թյուններու, վառ և անխափան պահված է:
Հ. Ղ. Ալիշանն ալ 1853 թվականին հրատա-
րակած քաղաքական աշխարհագրության մեջ
կհիշե այդ դպրոցը (էջ 399):

Այս դպրոցի առաջին ուսուցչուհիները ե-
ղած են Յաղուբյան քույրերը՝ Դեպիր և Տու-
տու, որոնց անունով հիշված է նաև դրպ-
րոցը՝ Դեպիր-Տուտույանի դպրոց⁷: Այս
դպրոցը շարունակված է սերունդն սերունդ և
ավելի վերջը կոչված է Ազգային Վարդան-
յան վարժարան, որ մինչև մեր օրերը կշա-
րունակվի:

Կանուխեն գոյություն ունեցած է նաև
աղջկանց կանոնավոր վարժարան մը,
որուն տնօրենությունը վարելու համար
Կոստանդնուպոլսո Պատրիարքարանեն ու-
ղարկված է մանկավարժական պատրաստու-
թյուն ունեցող օրիորդ Մաքրուհի Ղունկիա-
նոսյանը, որ ամուսնացած է տեղացի երի-
տասարդի մը հետ և մնացած Շումեն:

Սուրև կուտանք անվանացանկը տեղ-
վույն հայկական դպրոցին մեջ ծառայած
հայտնի 52 ուսուցիչներեն միայն անոնց,
որոնք երկար տարիներ աշխատած են և ե-
ղած են ավելի վաստակավոր. Դեպիր և Տու-
տու Յաղուբյան քույրեր 1834-ին, հարգելի
Պարոն ուսուցիչ (այսպես է կոչված և թերևս
ալ անունը Պարոն է), Տաճատ Պեյլերյան
1885-ին (բնիկ կելվեցի, եղած է գերմանե-
րենի թարգման Բեռլինի վեհաժողովին ներ-

⁶ Տե՛ս Ա. Ալպոլսեյան, «Պատմություն հայ Կեսա-
րիո», էջ 1095:

⁷ Եկեղեցիվ նվիրված Հայսմավուրքի հիշատակաբա-
նեն կտեղեկանանք, որ հվիրատու Յաղուբյան մահու-
սի Հովհաննեսը ունեցած է երկու մանչ և չորս աղջիկ,
որոնք կոչված են Ոսկի, Դեպիր, Տաճատ և Զարեֆ:
Աստեղմե երկու միջնեկները՝ Դեպիր և Տուտու չեն ա-
մուսնացած և եղած են եկեղեցական կույսեր ու
նվիրված հայ մանուկները հայերեն լեզվով դաս-
տիարակելու ազգանվիր գործունեության:

կայացող հայ հոգևորական պատվիրակության), Արալյան Տոնիկյան (Պոլսեն եկած), Արտաշես Մովսեսյան (Իզմիրցի), Հովհան-Նես Մանուկյան, Դանիել Ռազկրատյան, Համբարձում Գրիգորյան, Ստեփան Ապա-Համբարձում Գրիգորյան, Հակոբ Զորյան (օրգայան (ռոգոստոցի)), Հակոբ Ջորյան (օրգայան (ռոգոստոցի)), Նես Մանուկյան (անգարա-նալուսանցի), Արաքսի Կարապետյան, Շահունդուխտ Իշխանյան, Նվարդ Քյոթենեճյան⁸ և ուրիշներ:

Բուլղարահայ համայնքներում մեջ Շումենի հայությունն է, որ ծնունդ տված է բուլղարահայ առաջին հայ բանաստեղծին՝ Տիգրան Աճեմյանին (Վեստա) և բանասեր-դրամագետ Արտաշես Քյոթենեճյանին:

Ներկայիս ալ քիչ չէ թիվը շումենցի առաջավոր այն հայերում, որոնք պետական պատասխանատու պաշտոններ կվարեն:

Դեռ 1880-ական թվականներում կզամպի առաջին Թատերասիրաց ընկերությունը ազգային վարժարանն շրջանավարտ եղած երիտասարդներու կողմից: Այս խումբին կհաջորդեն «Արարատ» Թատերասիրացը, որ ավելի երկար կյանք և գործունեություն կունենա, հայ մշակութի և գեղարվեստի մասին որոշ ճաշակ տալով տեղվույն հայության:

Ավելի հետո կկազմվի նաև «Կոունկ» մանդոլինի նվագախումբը, որ քանի մը համերգներ կուտա, հայկական հայտագրով:

1900-ական թվականներում կհիմնվի Հայ տիկնանց բարեգործական միությունը գլխավորությամբ տիկին Տիրուհի Յազըճյանի, որ հարազատ մոր նման ձեռք-ձեռքի տված ուրիշ քանի մը լուսավորյալ կիներու՝ Մարի Գավաֆյանի, Արուսյակ Թախտագրանյանի և ուրիշներու հետ, կաշխատին աղջիկներու (ապագա մայրերու) լուսավորման համար: Քիչ ժամանակվան մեջ կհաջողին բանալ աղջկանց արհեստանոց՝ կարուձեռի և ձեռային աշխատանքի համար: Այս միությունը շուրջ 50 տարի կյանք և գործունեություն կունենա և կհանդիսանա իսկական շնորհ մը Շումենի իգական սեռին համար, իսկ ավելի վերջերը կօգնեն նաև ազգային վարժարանի աղբատիկ աշակերտներուն՝ և չքավոր ընտանիքներուն:

1944 թվականի սեպտեմբեր 9-ի ժողովրդական հեղափոխությունն հետո, ինչպես

Բուլղարիո բոլոր մեծ քաղաքներուն մեջ, հոս ալ հիմնվեցավ բուլղարահայ «Երևան» մշակութային միության ակումբ և գրադարան, որուն շուրջ համախմբված են Կուլարովգրադի գրեթե բոլոր անկեղծ և հայրենասեր հայերը:

Այս հայրենասիրական միությունը քիչ ժամանակվան մեջ մեծ հաջողություններ ձեռք բերավ հայ մշակույթի ու գեղարվեստը ոչ միայն հայ հասարակության, այլև Բուլղարիո մեջ ապրող բոլոր եղբայրական ժողովուրդներուն ծանոթացնելով: Մանավանդ միության երգի և պարի խումբը, որուն ղեկավարն է Սիրվարդ Զիլինկիրյան (որ Հայաստանի մեջ կատարելագործեց իր մասնագիտությունը), եղավ պատիվ բերող խումբ մը ոչ միայն Կուլարովգրադի, այլև ամբողջ Բուլղարիո մեջ, մասնակցելով Վառնայի շրջանային և Սոֆիայի համառեսպուբլիկական ֆեստիվալի ստուգատեսին և վարձատրվեցավ ոսկե մեդալով:

Շումենի կամ Կուլարովգրադի հայ ազգաբնակչության աճի վիճակագրական տվյալները հետևյալներն են. թրքական տիրապետության ժամանակ 1640-ին եղած է 19 տուն կամ 40 անձ: 1810-ին (ըստ Բարբի դը Բոկաթի վկայության) եղած է 46 տուն կամ շուրջ 200 անձ: 1853-ին (ըստ Հ. Ղ. Ալիշանի) եղած է 150 տուն կամ 550 անձ:

Իսկ Բուլղարիո թրքական լուծեն ազատագրվելեն հետո ունինք մարդահամարի վավերական թիվեր. 1880-ին՝ 927 անձ, 1892-ին՝ 738, 1910-ին՝ 640, 1920-ին՝ 620, 1926-ին՝ 949, 1950-ին՝ 750, 1960-ին՝ 680:

Այս համայնքի ամենաբարձր թիվը եղած է Բուլղարիո ազատագրության (1880) օրերում, անկե հետո միշտ նվազած է, իսկ 1922—1923-ին, թրքահայ գաղթականներու Բուլղարիա գալովը, կրկին բարձրացած է Շումենի հայության թիվը շուրջ 300 հոգիով:

Իսկ 1950—1960 տասը տարիներու ընթացքին, եկեղեցվո տոմարներուն մեջ արձանագրված է 88 ծնունդ և 96 մահ, որով համայնքի հայության թիվը հետզհետե պակսելու վրա է, իսկ մյուս կողմի ալ գործի կամ պաշտոնի բերումով շատ մը հայեր կմեկնին ավելի մեծ կեդրոններ: Այնուամենայնիվ շումենցի հայը դեռ հաստատ և կենսունակ կմնա իր պապերու հիմնած այս 350 տարվան հայկական օջախին մեջ, մինչև որ կարելի ըլլա օր մը վերադառնալ Արարատյան Մայր Հայրենիքի ջերմիկ ծոցը:

⁸ Տիկին Նվարդ Քյոթենեճյան մեծապես օգտակար եղավ մեզի մեր պրպտությունում մեջ, գործի լծելով նաև քանի մը ուրիշ գիտակից տիկիներու:

